Հայաստանի
Միգրացիոն
Ծառայություն

ISSN 2579-2725

# Միգրացիան թվերով

վերլուծական տեղեկագիր

2019 1-Ը (1)

# Եվրոպայում անօրինական բնակվող եւ վերադարձված ՀՀ քաղաքացիները

**ՎԱՐԴԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Միգրացիոն ծրագրերի եւ մոնիթորինգի
բաժնի գլխավոր մասնագետ

ISSN 2579-2725

Հայաստանի
Միգրացիոն Ծառայություն

# ՄԻԳՐԱՑԻԱՆ ԹՎԵՐՈՎ
# վերլուծական տեղեկագիր

## ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

Միգրացիան թվերով վերլուծական տեղեկագիր: Մաս Գ

2019 Ի -Ը (1)

**Վարդան Ազատի Մաթևոսյան**

Երևան

2019

***Խմբագիրներ՝***

**Արմեն Ղազարյան**

*Քաղաքական գիտությունների թեկնածու,*

*ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ*

**Իրինա Դավթյան**

*ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետի տեղակալ*

Միգրացիան թվերով վերլուծական տեղեկագիր պարբերականը մշակվում և հրապարակվում է ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետի 2019թ. մայիսի 15-ի N 20-Ա հրամանի համաձայն:

Տեղեկագիրը կազմված է երեք մասերից՝ «Եվրոպայում օրինական բնակվող ՀՀ քաղաքացիները», «Եվրոպայում միջազգային պաշտպանություն որոնող ՀՀ քաղաքացիները», «Եվրոպայում անօրինական բնակվող և վերադարձված ՀՀ քաղաքացիները»:

Պարբերականի այս համարում ամփոփվել են 2018թ. ընթացքում Եվրոպական միության (ԵՄ) անդամ երկրներում որպես անօրինական գտնվող հայտնաբերված ՀՀ քաղաքացիների վերաբերյալ վիճակագրությունը, ԵՄ անդամ պետությունների համապատասխան մարմինների կողմից ՀՀ քաղաքացիների վերադարձնելու վերբերյալ ընդունված որոշումների և փաստացի վերադարձվածների թվերը, նշված ցուցանիշների դինամիկան 2009-2018թթ. տասնամյակում:

©ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայություն, 2019

migrationservice.sms@mta.gov.am www.smsmta.am

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| | ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ | 5 |
| | ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ: | 7 |
| Ա | ԲԱԺԻՆ Ա: ԵՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՏՆՎՈՂ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ: | 10 |
| Ա.1 | 2018թ. ԵՄ երկրներում որպես անօրինական գտնվող հայտաբերված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների թիվը: | 10 |
| Ա.2 | ԵՄ երկրներում որպես անօրինական գտնվող հայտաբերված ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան 2009-2018թթ. | 12 |
| Բ | ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԵՆԵՐԸ | 14 |
| Բ.1 | 2018թ. ընթացքում ԵՄ անդամ պետություններից ՀՀ քաղաքացիներին վերադարձնելու վերաբերյալ ընդունված որշումների թիվը | 14 |
| Բ.2 | ԵՄ անդամ պետություններից ՀՀ քաղաքացիների հետ վերադարձման մասին ընդունված որոշումների թվի դինամիկան 2010-2018թթ. | 15 |
| Գ | ԵՄ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ: | 19 |
| Գ.1 | 2018թ. ընթացքում ԵՄ երկրներից փաստացի վերադարձված ՀՀ քաղաքացիների թիվը: | 19 |
| Գ.2 | ԵՄ երկրներից փաստացի վերադարձված ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան 2009-2018թթ. | 21 |

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Եվրոպական պետություններ մեկնող ՀՀ քաղաքացի միգրանտների մեծամասնությունը որպես նշանակակետ պետություններում հաստատվելու մեխանիզմ օգտագործում են միջազգային պաշտպանության գործիքակազմի ընձեռած հնարավորությունները: Սակայն ապաստանի համար լիազորված պետական մարմինների և դատական ատյանների կողմից բավարարվում են ՀՀ քաղաքացիների հայցերի տարեկան միջինը 9.5%-ը, ինչի արդյունքում ՀՀ քաղաքացիների մի ստվար բազմություն, սպառելով բացասական որոշումների/վճիռների վերանայումների և բողոքարկումների բոլոր հնարավոր տարբերակները և ձեռք չբերելով կացության այլ օրինական հիմքեր, վերածվում են անօրինական միգրանտների (առավել մանրամասն Եվրոպայում ապաստան հայցող ՀՀ քաղաքացիների վերաբերյալ տե՛ս «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիր» Մաս Ա http://www.miglib.org/sites/default/files/migration_in_figures_0.pdf): Վերջին տարիներին ՀՀ քաղաքացիների կողմից ապաստանի մեխանիզմներին զուգահեռ սկսել է կիրառվել նաև աշխատանքի հիմքով կացության կարգավիճակների (հիմնականում կարճաժամկետ 3-5 ամիս և 6-11 ամիս վավերականությամբ) միջոցով ԵՄ երկրներում հաստատվելու պրակտիկան, որի արդյունքում աշխատանքային վիզայի և կացության կարգավիճակի ժամկետների սպառումից հետո մուտքի երկիրը չլքած ՀՀ քաղաքացիները նույնպես համալրում են անօրինական գտնվողների շարքերը (առավել մանրամասն Եվրոպայում կացության կարգավիճակ ստացած և ունեցող ՀՀ քաղաքացիների թվի վերաբերյալ տե՛ս «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիր» Մաս Գ: )

Դեպի Եվրոպա էմիգրացիոն հոսքը իր բնույթով ունի մշտական միգրացիայի նպատակ, ինչը իր հերթին ենթադրում է մեկնողի կողմից «միգրացիայի գնի» վճարում: Վերջինս բարդ և բազմաշերտ կատեգորիա է, որը ներառում է ինչպես բարոյահոգեբանական կոմպոնենտներ (հայրենիքը լքել, հարազատներից հեռանալ, միջավայրի փոփոխություն և այլն), այնպես էլ ֆինանսական լուրջ ծախսեր: «Միգրացիայի գինը» վճարելու համար՝ ՀՀ քաղաքացիների մի մասը վաճառում են իրենց ունեցվածքը, տունը և տեղը: Այս համատեքստում Եվրոպայում անօրինական գտնվող և վերադարձված ՀՀ քաղաքացիների թվի ուսումնասիրությունը ձեռք է բերում խիստ կարևոր նշանակություն, նրանց վերաինտեգրման, իսկ հաճախ նաև հրատապ առաջնային օգնության տրմադրման գործընթացը ճիշտ կազմակերպելու և վերադարձվածների հոսքերը կառավարելու տեսանկյունից:

ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության միգրացիոն ծրագրերի և մոնիթորինգի բաժինը իր գործառույթներով պայմանավորված իրականացնում է միգրացիոն հոսքերի շարժերը բնութագրող մոտ երկու հարյուրի հասնող ցուցանիշների մշտադիտարկում՝ այդ թվում նաև անօրինական գտնվողների և վերադարձվածների վիճակագրության վարում:

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հետ համագործակցությամբ 2016 թվականից բաժնում ձևավորվել է Վերլուծական միավոր, որը պատասխանատու է համապատասխան վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման համար:

Սկսած 2019թ. բաժինը նախապատրաստում է «Միգրացիան թվերով. վերլուծական տեղեկագիրը», որը կազմված է երեք մասերից՝ «Եվրոպայում օրինական բնակվող ՀՀ քաղաքացիները», «Եվրոպայում միջազգային պաշտպանություն որոնող ՀՀ քաղաքացիները», «Եվրոպայում անօրինական բնակվող և վերադարձված ՀՀ քաղաքացիները»:

Պայմանավորված վերոհիշյալ մասերում ներկայացվող տվյալների հավաքագրման և մշակման առանձնահատկություններով՝ դրանցից յուրաքանչյուրը հրապարակվում է առանձին-առանձին:

Տեղեկագրի նպատակն է ՀՀ միգրացիոն իրավիճակի մասին տեղեկատվության տրամադրումը ՀՀ համապատասխան պետական մարմիններին, միջազգային և հասարակական կազմակերպություններին, խնդրով հետաքրքրվող գիտական և ուսումնական շրջանակներին և ընդհանրապես լայն հասարակությանը:

«Միգրացիան թվերով վերլուծական տեղեկագիր» պարբերականի Մաս Բ-ի՝ «Եվրոպայում անօրինական բնակվող ՀՀ քաղաքացիները», սույն համարում ներկայցված տվյալները հավաքագրվել են 2019թ. հունիսի 10-ի դրությամբ:

## ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Եվրոպական Միության (ԵՄ) անդամ պետություններում տարվա ընթացքում որպես անօրինական գտնվող հայտնաբերվածների, անդամ պետության տարածքը լքելու վերաբերյալ ընդունված որոշումների և փաստացի վերադարձված երրորդ երկրների քաղաքացիների թվաքանակների հավաքագրման աղբյուր հանդիսանում են Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) հրապարակումները և օնլայն շտեմարանը (https://ec.europa.eu/eurostat/data/database):

Տեղեկագրքում օգտագործված հիմնական հասկացությունների և եզրույթների սահմանումները թարգմանված են հեղինակի կողմից Եվրոստատի տվյալների շտեմարանի «Իմիգրացիոն օրեսդրության կիրարկում» բաժնի մետատվյալներ էջից (https://ec.europa.eu/eurostat/cache/metadata/en/migr_eil_esms.htm):

**Երրորդ երկրի քաղաքացի:**
Ցանկացած անձ, որը ԵՄ մասին պայմանագրի Հոդված 17(1)-ի սահմանման համաձայն չի հանդիսանում Միության քաղաքացի՝ ներառյալ քաղաքացիություն չունեցող անձինք:

**Արտաքին սահմանին մուտքի մերժում ստացած երրորդ երկրի քաղաքացիներ:**
Երրորդ երկրի քաղաքացի, որին փաստացի մերժել են մուտք գործել ԵՄ անդամ պետության տարածք: Արտաքին սահմաններ են համարվում Շենգենյան սահմանային օրենքով նախատեսված սահմանները՝ այդ թվում միջազգային օդանավակայանները և նավահանգիստները: Այն պետությունների համար, որոնք չեն հանդիսանում Շենգենյան գոտու մասնակիցներ, արտաքին է համարվում պետական սահմանը:
Յուրաքանչյուր անձ հաշվետու ժամանակահատվածում հաշվարկվում է միայն մեկ անգամ՝ անկախ ստացած մուտքի մերժումների թվից:

**Որպես անօրինական գտնվող հայտնաբերված երրորդ երկրի քաղաքացի:**
Երրորդ երկրի քաղաքացի, որը հայտնաբերվել է ԵՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից որպես անօրինական գտնվող՝ այսինքն կատարել է իմիգրացիան կարգավորող օրենսդրության խախտում: Այս խմբի մեջ ներառված են միայն ձերբակալված կամ այլ կերպ պետության միգրացիոն իշխանությունների ուշադրության կենտրոնում հայտնված անձինք: Այսինքն սույն վիճակագրությունը չի արտահայտում կոնկրետ երկրում գտնվելու իրավունք չունեցող անձանց ամբողջ սպեկտրը:

**Երրորդ երկրի քաղաքացիներ, որոնց նկատմամբ ընդունվել է ԵՄ անդամ պետության տարածքը լքելու վերաբերյալ որոշում:**

Երրորդ երկրի քաղաքացի, որը համաձայն ԵՄ Խորհրդի թիվ 862/2007 կարգավորման հոդված 7.1 (a)-ի հայտնաբերվել է որպես անօրինական գտնվող և որի նկատմամբ ընդունվել է վարչական կամ դատական որոշում/վճիռ, որով նրա գտնվելը ԵՄ անդամ պետությունների տարածքում ճանաչվել է անօրինական և նրան պարտավորեցրել են լքել անդամ պետության տարածքը: Յուրաքանչյուր անձ, հաշվետու ժամանակահատվածի համար, հաշվարկվում է մեկ անգամ՝ անկախ նրա նկատմամբ կայացված որոշումների/վճիռների քանակից:

Սույն վիճակագրությունը չի վերաբերում Դուբլինյան կարգավորումներով փոխանցվող ապաստան հայցող անձանց:

**Վերադարձման մասին որոշման հիման վրա ԵՄ անդամ պետության տարածքը լքած երրորդ երկրի քաղաքացիներ:**

Այս կատերգորիայի մեջ ներառված են համաձայն ԵՄ Խորհրդի (EC) no 862/2007 կարգավորման 7.1 (b) հոդվածի ԵՄ անդամ պետության տարածքում որպես անօրինական գտնվող հայտնաբերված և անդամ պետության տարածքը լքելու մասին վարչական կամ դատական որոշման/վճռի հիման վրա տարածքը փաստացի լքած երրորդ երկրի քաղաքացիները: ԵՄ անդամ պետությունները կամավորության սկզբունքով փաստացի վերադարձվածների վերաբերյալ տեղեկությունները եվրոստատին ներկայացնում են երկու ենթախմբերով՝ ընդամենը վերադարձվածներ և երրորդ երկիր վերադարձվածներ: Վերջինս ենթադրում է ծագման երկիր վերադարձվածների վերաբերյալ տվյալների տրամադրում:

Համաձայն ԵՄ խորհրդի 115/2008/EC դիրեկտիվի հոդված 3.3-ի Երրորդ երկրի քաղաքացիները կարող են վերադարձվել.

- ծագման երկիր,
- տարանցիկ երկիր, ինչը պետք է կարգավորված լինի ԵՄ կամ անդամ պետության կողմից կնքված ռեադմիսիայի (հետընդունման) համաձայնագրի կամ այլ նմանատիպ պայմանագրի դրույթներով,
- ցանկացած այլ երրորդ երկիր, ուր ցանկանում է վերադառնալ կոնկրետ անձը և որտեղ նրան կընդունեն:

Տարվա ընթացքում փաստացի վերադարձվածներից մի մասի վերաբերյալ վերադարձի որոշումները կարող են ընդունված լինել նախորդող տարում:

**Կամավոր վերադարձ:**

Կամավոր վերադարձը վերաբերում է այն իրավիճակին, երբ երրորդ երկրի քաղաքացին կամավոր կատարում է իր նկատմամբ կայացված վերադարձի որոշումը (հարկադիր վերադարձման ընթացակարգ չի սկսվել): Անձի մեկնումը անդամ պետության տարածքից պետք է հաստատված լինի սահմանապահ ծառայության, այդ անձի քաղաքացիության երկրի հյուպատոսական ծառայության կամ կամավոր վերադարձի ապահովմամբ զբաղվող կազմակերպության (Օրինակ՝ ՄՄԿ) կողմից: Համաձայն ԵՄ Խորհրդի և Խորհրդարանի 115/2008/EC դիրեկտիվի հոդված 3.8-ի կամավոր վերադարձը պետք է իրականացվի որոշման/վճռի մեջ նշված ժամկետում, այլապես այն չի համարվի կամավոր:

**Հարկադիր վերադարձ:**

Հարկադիր վերադարձը, կամ վերադարձման ստիպումը վերաբերում է այն իրավիճակին, երբ երրորդ երկրի քաղաքացու նկատմամբ կիրառվում է վերադարձման պարտավորեցման ընթացակարգ համաձայն ԵՄ խորհրդի և Խորհրդարանի 115/2008/EC դիրեկտիվի հոդված 33.5-ի այն է «Հեռացում», որը ենթադրում է կոնկրետ անձի ֆիզիկական տեղափոխում անդամ պետության տարածքից ի կատարումն վերադարձման պարտավորության:

**Ենթադրյալ վերադարձ:**

Եզրակացված վերադարձը վերաբերում է այն իրավիճակին, երբ կարելի է ողջամտորեն ենթադրել, որ երրորդ երկրի քաղաքացին լքել է պետության տարածքը, սակայն մեկնումը հաստատված չէ սահմանապահների կամ այլ աղբյուրների կողմից:

**Օժանդակված վերադարձ:**

Այս կատեգորիան ներառում է այն դեպքերը, երբ երրորդ երկրի քաղաքացին վերադարձի համար ստացել է օժանդակություն՝ այսինքն վերադարձվողը հանդիսանում է ազգային կամ ԵՄ կաղմից իրականացվող վերադարձը խրախուսող և վերաինտեգրմանը աջակցող ծրագրի շահառու: Նման դեպքերում երրորդ երկրի քաղաքացին կարող է ստանալ.

1. Նախամեկնումային օգնություն (օրինակ՝ ինքնաթիռի տոմսերի ձեռքբերում),
2. Ժամանման վայրում և ժամանման պահին օգնություն կանխիկ դրամի տեսքով,
3. Դրամական կամ այլ օժանդակություն վերադարձից հետո վերաինտեգրման համար:

Օժանդակված վերադարձի շահառուները հիմնականում կամավոր վերադարձածներն են, սակայն որոշ դեպքերում օժանդակության տրամադրման մեխանիզմը գործում է նաև պարտադիր վերադարձի պարագայում:

## ԲԱԺԻՆ Ա: ԵՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՏՆՎՈՂ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ:

### *Ա.1. 2018թ. ԵՄ երկրներում որպես անօրինական գտնվող հայտաբերված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների թիվը:*

2018թ. ընթացքում ԵՄ անդամ 28 պետություններում որպես անօրինական գտնվող հայտնաբերվել է 2,325 Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Նրանց մեծ մասը՝ 65.6%-ը, եղել են տղամարդիկ:



Գծանկար 1

Որպես անօրինական գտնվող հայտնաբերվածների մոտ կեսը եղել են 35 և ավելի տարեկան, անչափահասների մասնաբաժինը կազմել է ընդամենը 11%, երիտասարդներինը՝ 40%:



Գծանկար 2

Ընդհանուր առմամբ 2018թ. ԵՄ անդամ պետություններում որպես անօրինական գտնվող հայտնաբերվել է 601.500 երրորդ երկրների քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ:

Այս ցուցանիշի առավելագույն նշանակությունը վերջին տասնամյակում գրանցվել էր 2015թ.՝ 2,154,675 որպես անօրինական հայտնաբերված անձ: Հաջորդող տարիներին ցուցանիշը ունեցել է նվազման միտում՝ 983,860 անձ 2016թ. և 618,775 անձ 2017թ.:

2018թ. ԵՄ անդամ պետություններում որպես անօրինական բնակվող հայտնաբերված անձանց ընդհանուր թվաքանակում ՀՀ քաղաքացիների մասնաբաժինը կազմել է ընդամենը 0.4%:

[1] Ի տարբերություն այլ վիճակագրական հաշվետվությունների որպես անօրինական գտնվող հայտնաբերվածների վերաբերյալ տվյալները Եվրոստատի շտեմարանում ներկայացված են տարբերվող տարիքային խմբերով՝ մասնավորապես 35 տարեկան և բարձր տարիք ունեցողները միավորված են մեկ խմբի մեջ:

Աշխարհագրական բաշխվածության առումով ամենամեծ թվով որպես անօրինական գտնվող ՀՀ քաղաքացիներ հայտնաբերվել են Գերմանիայում (50.5%), Ֆրանսիայում (23.0%) և Լեհաստանում (8.6%): Այս առումով անհրաժեշտ է նշել, որ առաջին երկու պետությունները հանդիսանում են ՀՀ քաղաքացի ապաստան հայցողների շրջանում ամենատարածված նպատակակետ երկրները և մեծ է հավանականությունը, որ ապաստանի հայցի մերժվելուց հետո նրանց մի մասը չի լքել մուտքի երկիրը կամ ձեռք չի բերել օրինական բնակության այլ հիմք: Լեհաստանի պարագայում, որը «աշխատանքի» հիմքով ԵՄ երկրներում կացության կարգավիճակ ստացած ՀՀ քաղաքացիների հիմնական նշանակակետ պետությունն է, կարելի է եզրակացնել, որ որպես անօրինական գտնվող հայտնաբերվածների մի մասը աշխատանքի հիմքով ստացված կացության կարգավիճակի ժամկետի սպառվելուց հետո հետ չվերադարձած կամ բնակության այլ իրավական հիմքեր ձեռք չբերելու հետևանքով անօրինական միգրանտի վերածվածներն են:



*Գծանկար 3*

## Ա.2. ԵՄ երկրներում որպես անօրինական գտնվող հայտաբերված ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան 2009-2018թթ.



Գծանկար 4

2009-2018թթ. ընթացքում ԵՄ երկրներում որպես անօրինական գտնվող հայտնաբերվել է 25,435 ՀՀ քաղաքացի՝ տարեկան միջինը 2,544:

Ինչպես կարելի է տեսնել բերված գծապատկերում դիտարկվող տարիների ընթացքում որպես անօրինական բնակվող հայտնաբերված ՀՀ քաղաքացիների թիվը դրսևորել է անկայուն դինամիկա: Սակայն վերջին երկու տարում ունեցել է նվազման միտում, իսկ 2018թ. ցուցանիշը հատկանշական է նրանով, որ վերջին հինգ տարիների ընթացքում առաջին անգամ տարեկան ցուցանիշը փոքր էր տարեկան միջին նշանակությունից:



Գծանկար 5.ա



Գծանկար 5.բ

Դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում ԵՄ երկրներում որպես անօրինական գտնվող հայտնաբերված ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվում մեծամասնություն են կազմել տղամարդիկ՝ ընդհանուր թվի 66.2%-ը: Ինչ վերաբերում է տարիքային բաշխվածությանը,

ապա այս տարիների ընթացքում մասնաբաժինները ենթարկվել են փոփոխությունների. մինչ 2015թ. որպես անօրինական գտնվող հայտնաբերվածների մեծամասնությունը՝ տարեկան միջինը 51%, կազմում էին երիտասարդները՝ 18-34 տարեկան, վերջին երեք տարիներին նրանց մասնաբաժինը կրճատվել է՝ 2018թ. հասնելով 40%-ի: Ի տարբերություն երիտասարդների, 35 տարեկան և ավելի խմբի մասնաբաժինը տարեցտարի հիմնականում գրանցել է ավելացում:



Գծանկար 6

Դիտարկվող տասնամյակում որպես ԵՄ անդամ պետություններում անօրինական գտնվող հայտնաբերված ՀՀ քաղաքացիների մեծամասնությունը՝ 88.7%-ը, հայտնաբերվել են Գծանկար 6-ում ներկայացված յոթ երկրներում: Անհրաժեշտ է նշել, որ առաջատար պետությունների ցանկը գրեթե ամբողջությամբ կրկնում է Եվրոպայում միջազգային պաշտպանություն որոնող ՀՀ քաղաքացիների հիմնական նշանակակետ երկրների ցանկը:

## Ովքե՞ր են ենթակա վերադարձման:

ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների քաղաքացիները, ովքեր չունեն ԵՄ տարածքում գտնվելու օրինական իրավունք, ենթակա են վերադարձման՝ համաձայն միջազգային իրավունքի նորմերի: Այս խմբի մեջ մտնում են այն անձինք, որոնց ապաստանի հայցերը մերժվել են, մնացել են ԵՄ տարածքում ավելի երկար քան նախատեսված է վիզայի ժամկետով և նրանք ովքեր ենթակա են վերադարձման քրեական սանկցիայի շրջանակներում:

## ԲԱԺԻՆ Բ: ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՄ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԵՆԵՐԸ

### *Բ.1. 2018թ. ընթացքում ԵՄ անդամ պետություններից ՀՀ քաղաքացիներին վերադարձնելու վերաբերյալ ընդունված որշումների թիվը*

Համաձայն ԵՄ Խորհրդի թիվ 862/2007 կարգավորման հոդված 7.1 (a)-ի երրորդ երկրի բոլոր այն քաղաքացիների նկատմամբ, որոնք հայտնաբերվել են որպես անօրինական գտնվող ընդունվում են վարչական կամ դատական որոշումներ/վճիռներ, որոնցով նրանց գտնվելը ԵՄ անդամ պետությունների տարածքում ճանաչվում է անօրինական և նրանց նկատմամբ կայացվում է տարածքը լքելու մասին համապատասխան որոշում[2]:

2018թ. ընթացքում ԵՄ անդամ պետությունների կողմից ընդունվել է 4135 ՀՀ քաղաքացիների վերադարձման վերաբերյալ որոշում, որոնց մեծամասնությունը՝46,8%, ընդունվել է Ֆրանսիայի, 25,3%՝ Գերմանիայի և 9.7%՝ Բելգիայի համապատասխան մարմինների կողմից:



*Գծանկար 7*

ԵՄ անդամ պետությունների կողմից ՀՀ քաղաքացիներին վերադարձնելու վերաբերյալ որոշումների վիճակագրությունը Եվրոստատի շտեմարաններում մինչ 2018թ. ներկայացվում էր առանց սեռատարիքային կառուցվածքի վերաբերյալ տվյալների: 2018թ-ից, չնայած, այդ տեղեկությունները սկսել են ներկայացվել, սակայն ոչ բոլոր պետությունների մասով: Ցավոք, առկա տվյալները կազմում են ընդհանուր թվի կեսից պակասը, ուստի դրանք չեն կարող ներկայացուցչական համարվել:

[2] Եվրոստատի «Միգրացիոն օրենսդրության կիրարկում» բաժնի մեթատվյալներ: https://ec.europa.eu/eurostat/cache/metadata/en/migr_eil_esms.htm

## Բ.2. ԵՄ անդամ պետություններից ՀՀ քաղաքացիների հետ վերադարձման մասին ընդունված որոշումների թվի դինամիկան 2010-2018թթ.

2009-2018թթ. ընթացքում ԵՄ անդամ պետություններում ընդունվել է 46,945 ՀՀ քաղաքացիների վերադարձնելու մասին որոշում՝ տարեկան միջինը 4,695:



*Գծանկար 8*

Ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 8-ում, ամենամեծ թվով վերադարձման մասին որոշումներ ընդունվել են 2013թ., ինչից հետո երեք տարի այս ցուցանիշը ունեցել է նվազման միտում: 2015-2016թթ. ընթացքում գրանցվել է տարեկան միջին ցուցանիշից ցածր նշանակություն[3]: 2017թ կտրուկ աճը՝ նախորդ տարվա համեմատ 31.1%, հիմնականում կարող է պայմանավորված լինել 2016թ. տեղի ունեցած ԵՄ երկրներում ՀՀ քաղաքացի ապաստան հայցողների թվի աճով:

2018թ. տեղի ունեցավ այս ցուցանիշի նվազում՝ նախորդ տարվա համեմատ -22.4%, սակայն ցուցանիշը դեռ շարունակում է գերազանցել 2016թ. նշանակությունը:

Դիտարկվող տասնամյակում ամենամեծ թվով վերադարձման մասին որոշումներ ընդունվել են Ֆրանսիայում՝ 16,935 կամ ընդհանուր թվի 36.1%-ը: Ֆրանսիային հաջորդում է Բելգիան՝ 9,490 անձի վերադարձման մասին որոշում կամ ընդհանուր թվի 20.2%-ը: Առաջատարների եռյակը եզրափակում է Նիդերլանդները՝ 6,190 անձի վերադարձի մասին ընդունված որոշում, կամ ընդհանուր թվի 13.2%-ը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ 2017-2018թթ. տեղի ունեցավ առաջատար պետությունների և՛ մասնաբաժինների, և՛ կազմի փոփոխություն: Օրինակ, Գերմանիայի մասնաբաժինը մինչ 2015թ. կազմում էր տարեկան միջինը ընդամենը 3.9%, սակայն սկսած 2016թ. տեղի ունեցավ մասնաբաժնի ավելացում 2017թ. հասնելով 40%-ի, իսկ 2018թ. կազմելով ընդհանուր թվի մեկ քառորդը: Հակառակ դրան Նիդերլանդների տարեկան միջին մասնաբաժինը մինչ 2016թ. կազմում էր 15.2%, 2017թ. այն նվազեց և կազմեց 7.6%, իսկ 2018թ. ընդհանրապես հասավ 1.6%-ի:

[3] 2009-2014թթ. համար տարեկան միջինը կազմել է 4891, իսկ 2009-2015՝ 4791:

Բելգիայի մասնաբաժինը դիտարկվող տարիներին նույնպես դրսևորել էր նմանատիպ միտում, սակայն ի տարբերություն Նիդերլանդների 2017-2018թթ. անկումը կտրուկ չէր եղել: 2009-2016թթ. համար Բելգիայի տարեկան միջին մասնաբաժինը կազմում էր 21.3%, 2017թ. այն կազմեց 12.8%, իսկ 2018թ 9.7%: Միաժամանակ պետք է նշել, որ 2017թ. Բելգիայում ընդունված ՀՀ քաղաքացիներին վերադարձնելու մասին որոշումների բացարձակ նշանակությունը գերազանցում էր նախորդ տարվա թվին, այսինքն նվազել էր միայն մասնաբաժինը:

Ընդհանուր առմամբ դիտարկվող ժամանակահատվածում մասնաբաժինների փոփոխությունները պայմանավորված են եղել հիմնականում ընդունված որոշումների բացարձակ թվերի տատանումներով, իսկ վերջին երկու տարիների համար՝ նաև Գերմանիայի կողմից ընդունվող որոշումների կտրուկ աճով, ինչի արդյունքում տեղի ունեցավ ոչ միայն առաջատար հնգյակի կազմի փոփոխություն, այլ նաև ընդհանուր մասնաբաժինների վերաբաշխում:

***ՀՀ քաղաքացիների թիվը, որոնց նկատմամբ կայացվել է ԵՄ երկրներից վերադարձման որոշում***

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ֆրանսիա | 1020 | 1240 | 1390 | 1765 | 2490 | 2290 | 1875 | 1500 | 1430 | 1935 | 16935 |
| Բելգիա | 380 | 575 | 1865 | 1665 | 1570 | 995 | 690 | 670 | 680 | 400 | 9490 |
| Նիդերլանդներ | 490 | 610 | 745 | 740 | 950 | 980 | 635 | 570 | 405 | 65 | 6190 |
| Գերմանիա | 135 | 220 | 130 | 105 | 210 | 245 | 220 | 440 | 2125 | 1045 | 4875 |
| Ավստրիա | 420 | 405 | 330 | 135 | 180 | 0 | 210 | 290 | 150 | 180 | 2300 |
| Շվեդիա | 180 | 200 | 310 | 265 | 175 | 265 | 220 | 160 | 250 | 165 | 2190 |
| Լեհաստան | 215 | 220 | 140 | 125 | 80 | 100 | 75 | 50 | 80 | 160 | 1245 |
| Իսպանիա | 285 | 235 | 225 | 180 | 95 | 75 | 80 | 40 | 10 | 20 | 1245 |
| Հունաստան | 160 | 105 | 60 | 105 | 75 | 55 | 55 | 30 | 35 | 25 | 705 |
| Չեխիա | 60 | 35 | 55 | 35 | 40 | 30 | 15 | 15 | 10 | 15 | 310 |
| Այլ | 165 | 160 | 140 | 110 | 150 | 160 | 115 | 180 | 155 | 125 | 1460 |
| **Ընդամենը** | **3510** | **4005** | **5390** | **5230** | **6015** | **5195** | **4190** | **3945** | **5330** | **4135** | **46945** |

***Աղյուսակ 1***

Անհրաժեշտ է նշել, որ վերադարձման մասին որոշումների թվի աճը համընկնում է ԵՄ երկրներց ստացված ռեադմիսիոն հայցերի թվի աճի հետ[4], ինչը պայմանավորված էր ինչպես հայցադիմումների քանակի աճով, այնպես էլ այդ հայցերը ներկայացնող պետությունների

[4] 2013թ. ապրիլի 19-ին ստորագրվել և 2014թ. հունվարի 1-ին ուժի մեջ է մտել «ՀՀ և ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը: Ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում պարզվում է այն անձանց ինքնությունը, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում հարցում ներկայացրած պետության տարածք մուտք գործելու, ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է կամ ներկայացված առերևույթ (prima facie) փաստարկների հիման վրա կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, որ նրանք Հայաստանի քաղաքացիներ են:

թվի աճով: Այդպես եթե 2013թ. ռեադմիսիայի հայց ստացվել էր ԵՄ անդամ երկու պետությունից՝ Շվեդիա և Լեհաստան, ապա 2018թ. արդեն ութ՝ Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Ֆրանսիա, Գերմանիա, Նիդերլանդներ, Լեհաստան և Շվեդիա (2018թ. ԵՄ երկրներից ստացված ռեադմիսիոն հայցերի վիճակագրությունը տե՛ս Աղյուսակ 2):

***ԵՄ երկրներից ստացված ռեադմիսիոն հայցերի թիվը 2018թ.***

| | Հայցը ներկայացնող պետություն | Ստացված հայցերի թիվը | Հայցերում նշված անձանց թիվը | Քաղաքացիությունը հաստատված անձանց թիվը | Քաղաքացիությունը չհաստատված անձանց թիվը | Դրական պատասխանների %-ը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ավստրիա | 73 | 182 | 110 | 66 | 62.50% |
| 2 | Բելգիա | 21 | 44 | 41 | 3 | 93.18% |
| 3 | Բուլղարիա | 3 | 3 | 1 | 1 | 50% |
| 4 | Ֆրանսիա | 98 | 126 | 108 | 12 | 90% |
| 5 | Գերմանիա | 681 | 1385 | 1171 | 189 | 86.10% |
| 6 | Նիդերլանդներ | 53 | 139 | 109 | 32 | 77.30% |
| 7 | Լեհաստան | 23 | 38 | 30 | 3 | 90.91% |
| 8 | Շվեդիա | 37 | 78 | 47 | 27 | 63.51% |
| | **Ընդամենը** | **989** | **1995** | **1617** | **333** | **82.92%** |

***Աղյուսակ 2***

Ինչպես կարելի է տեսնել Աղյուսակ 3-ում ՀՀ – ԵՄ ռեադմիսիայի մասին համաձայնագրի կնքումից հետո յուրաքանչյուր տարի գրանցվել է ոչ թե ուղղակի ստացվող հայցերի թվի աճ և աշխարհագրության ընդլայնում, այլ ցուցանիշների տասից ավելի անգամ աճ: Աճի միտումը սկսվել է 2016թ., երբ նախորդ տարվա համեմատ հավելաճը կազմել էր 74%, և շեշտակի շարունակվել հաջորդ տարիներին՝ 257% հավելաճ 2017թ. և 13.4%՝ 2018թ.: 2014թ. համեմատ հայցերում նշված անձանց թվի հավելաճը 2018թ. կազմում է մոտավորապես 869%, իսկ քաղաքացիությունը հաստատված անձանց թվինը՝ 993%:

***2014-2018թթ. ստացված ռեադմիսիոն հայցերի դինամիկան***

| | Ներկայացված հայցերի թվը | Հայցերում նշված անձանց թիվը | Քաղաքացիությունը հաստատված անձանց թիվը | Քաղաքացիությունը չհաստատված անձանց թիվը | Դրական պատասխանների %-ը |
|---|---|---|---|---|---|
| 2014 | 100 | 211 | 151 | 57 | 72.6% |
| 2015 | 146 | 282 | 223 | 57 | 79.6% |
| 2016 | 254 | 482 | 410 | 49 | 89.3% |
| 2017 | 908 | 1782 | 1391 | 299 | 82.3% |
| 2018 | 1030 | 2045 | 1651 | 334 | 83.2% |

***Աղյուսակ 3***

Ռեադմիսիոն գործընթացը բնութագրող ցուցանիշների աճը վերջին երկու տարիներին, ինչպես կարելի է տեսնել  Գծանկար 9-ում, պայմանավորված էր Գերմանիայից ստացվող հայցերի թվի աճով: Ընդհանուր առմամբ, 2014-2018թթ. ԵՄ անդամ այլ պետություններից ստացվել է ավելի քիչ անձանց մասին ռեադմիսիոն հայցադիմում, քան Գերմանիայից 2017-2018թթ. ընթացքում:




*Գծանկար 9*

## ԲԱԺԻՆ Գ: ԵՄ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԹԻՎԸ:

### *Գ.1. 2018թ. ընթացքում ԵՄ երկրներից փաստացի վերադարձված ՀՀ քաղաքացիների թիվը:*

2018թ. ԵՄ անդամ երկրների համապատասխան մարմինների կողմից ընդունված վերադարձման մասին որոշումների հիման վրա փաստացի վերադարձվել է 2030 ՀՀ քաղաքացի, որոնցից 1935-ը՝ Հայաստան[5]:




2018թ. ընթացքում ԵՄ երկրներից փաստացի վերադարձված ՀՀ քաղաքացիների մեծ մասը՝ 53%, վերադարձվել են՝ Գերմանիայից: Սակայն անհրաժեշտ է նշել, որ վերադարձման մասին որոշումների մեծ մասը 2018թ. ընդունվել էր Ֆրանսիայում՝ ընդհանուր թվի 46.8%-ը:




Ինչպես կարելի է տեսնել Գծանկար 10-ում, ՀՀ քաղաքացիների վերադարձման վիճակագրության առաջատար պետություններից որոշներում (օրինակ՝ Ֆրանսիա, Բելգիա, Լեհաստան) պետական կառավարման համապատասխան մարմինները չեն շտապել իրականացնել վերադարձման մասին որոշումները:

[5] Համաձայն ԵՄ խորհրդարանի և խորհրդի 2007թ. հուլիսի 11-ի (EC) No 862/2007 կարգավորման ԵՄ անդամ պետությունները պարտավոր են Եվրոստատին տրամադրել վարչական կամ դատական որոշման հիման վրա իրենց տարածքը փաստացի լքած անձանց թվի վերաբերյալ տվյալներ, սակայն անդամ պետությունները կամավորության սկզբունքով տրամադրում են նաև տվյալներ կոնկրետ երրորդ պետություն վերադարձված անձանց թվի վերաբերյալ:

Անօրինական գտնվող միգրանտների վերադարձումը բարդ և ծախսատար գործընթաց է, որը իր մեջ ներառում է մի քանի տեսակի ենթագործընթացներ՝ հարկադիր վերադարձ, կամավոր վերադարձ, օժանդակված վերադարձ, ենթադրյալ վերադարձ և այլն: Միջազգային իրավունքի գրեթե բոլոր նորմերով երրորդ երկրի քաղաքացու վերադարձման ծախսերը պետք է հոգա վերադարձնող կողմը: Հենց այս հանգամանքն էլ այն պատճառներից մեկն է, որ վերադարձման մասին որոշումների թիվը և փաստացի վերադարձվածների թվաքանակը շատ դեպքերում չեն համընկնում: Այս պատճառների շարքում կարող են հիշատակվել նաև վերադարձման մասին վճռին չենթարկվելը և բնակության մի երկիրը մեկ այլով փոխարինելը՝ հաշվի առնելով ԵՄ-ում առկա բաց սահմանները այս հնարավորությունն առավել քան իրատեսական է:

Մեկ այլ պարագայում փաստացի վերադարձվածների թիվը կարող է գերազանցել տարվա ընթացքում վերադարձման մասին ընդունված որոշումների թիվը, ինչը բացատրվում է նրանով, որ վերադարձման որոշումը կարող է ընդունված լինել փաստացի վերադարձին նախորդող տարում: Օրինակ՝ Սլովենիայի իշխանությունների կողմից 2017թ. ընդունվել էր 1,975 երրորդ երկրի քաղաքացու վերադարձման մասին որոշում, փաստացի վերադարձվել էր 250 անձ, իսկ արդեն 2018թ. ընդունվել էր 2,080 անձի վերադարձման որոշում, բայց փաստացի վերադարձվել 4,445 երրորդ երկրի քաղաքացի:

Ընդհանուր առմամբ 2018թ. ընթացքում ԵՄ անդամ պետություններում ընդունվել է 478,155 անձի վերադարձման մասին որոշում, փաստացի վերադարձվել է 198,375 անձ: Այսինքն վերադարձելիության գործակիցը[6] կազմել էր կեսից պակաս՝ 41.5%: ՀՀ քաղաքացիների պարագայում վերադարձելիության գործակիցը 2018թ. գերազանցել է ԵՄ ընդհանուր ցուցանիշը և կազմել 49.1%:

[6] Վերադարձելիության գործակիցը հավասար է փաստացի վերադարձվածների հարաբերությանը վերադարձման որոշում ընդունվածների թվին: Հաշվի առնելով, որ տարվա ընթացքում փաստացի վերադարձվածների թիվը կարող է գերազանցել վերադարձման որոշումների թվին՝ անհրաժեշտ է նշել, որ այս գործակցի կիրառումը ընդհանուր թվաքանակի նկատմամբ, առանձին վերցված մեկ տարում, խիստ պայմանական է: Այն առավել կիրառելի է կոնկրետ երրորդ երկրի քաղաքացիներին կոնկրետ ԵՄ անդամ պետությունից վերադարձման մակարդակը ուսումնասիրելու պարագայում՝ առնվազն հնգամյա դինամիկայի դիտարկամ համատեքստում:

## Գ.2. ԵՄ երկրներից փաստացի վերադարձված ՀՀ քաղաքացիների թվի դինամիկան 2009-2018թթ.

2009-2018թթ. ընթացքում ԵՄ անդամ պետություններից փաստացի վերադարձվել է 13,095 ՀՀ քաղաքացի, որոնցից 12,050-ը վերադարձվել են Հայաստան:




Գծանկար 12

Դիտարկվող տասնամյակում ԵՄ երկրներից փաստացի վերադարձված ՀՀ քաղաքացիների մասնաբաժինը վերադարձման որոշում ունեցող ՀՀ քաղաքացիների թվում տատանվել է 20.4%-ի և 49.1%-ի միջակայքում՝ տարեկան միջինը կազմելով 28.6%:




Գծանկար 13

Հետաքրքրական է, որ դիտարկվող ամբողջ տասնամյակում, բացի 2018թ., ՀՀ քաղաքացիների փաստացի վերադարձելիության գործակիցը տարեկան միջինը 17.4%-ով զիջում էր ԵՄ ընդհանուր ցուցանիշին: 2018թ. այս ցուցանիշը գրանցելով 1.7 անգամ աճ նախորդ տարվա համեմատ, գերազանցեց համաեվրոպական ցուցանիշի նշանակությունը (տե՛ս Գծանկար 13):



Գծանկար 14

Դիտարկվող տասնամյակի համար փաստացի վերադարձված ՀՀ քաղաքացիների տարեկան միջին նշանակության հիման վրա կարելի է առանձնացնել հինգ հիմնական ԵՄ անդամ պետություն՝ Գերմանիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Բելգիա և Շվեդիա: Այս պետությունները միասին տարեկան փաստացի վերադարձրել են միջինը ԵՄ-ից ընդամենը վերադարձվածների 3/4-ին:

Ինչպես կարելի է տեսնել Գծանկար 15-ում նշված պետությունների մասնաբաժինները դիտարկվող ժամանակահատվածում ենթարկվել են ընդգծված փոփոխությունների, ինչը հիմնականում պայմանավորված է եղել Գերմանիայի կողմից վերադարձվածների մասնաբաժնի աճով:



*2009-2018թթ. ԵՄ անդամ երկրներից փաստացի վերադաձված ՀՀ քաղաքացիների թիվը*

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գերմանիա | 235 | 225 | 130 | 115 | 160 | 205 | 265 | 320 | 790 | 1075 |
| Ֆրանսիա | 120 | 185 | 180 | 260 | 260 | 310 | 235 | 180 | 200 | 315 |
| Ավստրիա | 65 | 120 | 120 | 55 | 40 | 30 | 65 | 80 | 110 | 160 |
| Բելգիա | 85 | 140 | 280 | 340 | 265 | 205 | 130 | 135 | 95 | 105 |
| Շվեդիա | 115 | 110 | 170 | 190 | 160 | 105 | 130 | 110 | 90 | 105 |
| Նիդերլանդներ | 70 | 90 | 95 | 195 | 155 | 140 | 175 | 100 | 75 | 95 |
| Լեհաստան | 135 | 75 | 60 | 30 | 60 | 55 | 50 | 50 | 45 | 60 |
| ՄԹ | 25 | 30 | 30 | 20 | 25 | 20 | 20 | 30 | 30 | 25 |
| Հունաստան | 20 | 20 | 15 | 35 | 15 | 35 | 20 | 120 | 5 | 15 |
| Իսպանիա | 50 | 35 | 50 | 30 | 25 | 10 | 15 | 15 | 5 | 10 |
| Այլ անդամ երկրներ | 115 | 70 | 105 | 70 | 65 | 90 | 95 | 60 | 75 | 65 |
| **Ընդամենը ԵՄ** | **1035** | **1100** | **1235** | **1340** | **1230** | **1205** | **1200** | **1200** | **1520** | **2030** |

***Աղյուսակ 4***